

ՂՂԶԵՐԵՆԻ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԵԶՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Հնագույն ժամանակներից անասնապահությունը եղել է թյուրքական ժողովուրդների գոյատևման հիմնական միջոցներից մեկը: Այդ իսկ պատճառով թյուրքական բառաֆոնդն ունի հայալուստ և դարգացած անասնապահական եզրաբանություն, որի մի մասն առաջացել է դեռևս այն ժամանակ, երբ թյուրքական լեզուները դեռ բաժանված չէին¹:

Ընտանի կենդանիների անվանումները թյուրքական լեզուների ամենահին շերտերից են: Դրանք այժմ էլ կազմում են ժամանակակից բառաֆոնդի մի մասը: Ներկա աշխատանքում փորձ է արվում ներկայացնել դրդերենի անասնապահական եզրերի պատմահամեմատական բնութագիրը, նպատակ ունենալով որոշել առկա հին թյուրքական շերտերը, գտնել այն անվանումները, որոնք ընդհանուր են բոլոր թյուրքական լեզուների կամ դրանց մեծ մասի համար, որոշել, թե դրանցից որոնք են առավել հաստատուն կամ փոփոխական և թե ինչպիսի հնչյունական փոփոխությունների են ենթարկվել:

Ներկայումս Միջին Ասիայում բնակվող ժողովուրդներից դրդները պատմագրության մեջ ամենավաղն են հիշատակվում²: Միջին Ասիայի արևելյան մասին վերաբեյադ գրեթե բոլոր տեղեկությունները քաղված են չինական պաշտոնական պատմագրությունից: Առաջին ոչ չինական գրավոր արձանագրությունները, որ ամրագրել են Միջին Ասիայի և Հարավային Սիբիրի հսկայական տարածքներում տեղի ունեցող պատմական իրադարձությունները հին թյուրքական օրխոնանենիսերան սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող վավերագիր արձանագրություններն են³: Սրանց շնորհիվ ուսումնասիրողները

¹ St 'u A. H. Баскаков, *Введение в изучение тюркских языков*, Москва, 1969, стр. 383

² В. В. Бартольд, *Сочинения*, т. 2. Изд.-во восточной литературы, Москва, 1963, стр. 473.

³ С. Г. Кляшторный, *Древнетюркская письменность и культура народов Центральной Азии*, Тюркологический сборник, изд. "Наука", Москва, 1973, стр. 254-265.

հնարավորություն են ստանում տեղեկանալու չինական ազդեցությունից ազատ լուսայանումներին: Սակայն այս արձանագրությունները դյուզների մասին շատ հակիրճ տեղեկություններ են տալիս: Թույլությունքին նվիրված հուշարձանում վերջիններս հիշատակվում են որպես թուրքական կազանատի ամենառիտերիմ թշնամի⁴: Շատ ավելի մանրամասն տեղեկություններ կարող ենք քաղել Թան հարստության (618-907թթ.) պատմությունից: Այստեղ առաջին անգամ ստույգ նշվում է, թե որտեղ են բնակվում դյուզները, ինչ ճանապարհներով է կապված նրանց երկիրն ուրիշ երկրների հետ և պարունակում են տվյալներ նրանց արտաքին տեսքի և լեզվի մասին: Օրինակ բերված մի քանի դյուզներեն նառերից պարզ է դառնում, որ այդ ժամանակ դյուզներն արդեն թուրքալեզու էին⁵: Դրոզ ժողովրդի կազմավորմանը մասնակցած ցեղերի էթնիկական պատմությունը ձևավորվել է Կենտրոնական Ասիայի, Միջին Ասիայի, Հարավային Սիբիրի և ժամանակակից Դյուզստանի տափաստանների հսկայական տարածքներում, և դյուզների ձևավորման պրոցեսը որպես ժողովուրդ սերտորեն կապված է եղել այս վայրերում ընթացող տարբեր էթնիկական խմորումների հետ: Այն չի կայտոյ դիտարկվել առանց հաշվի առնելու այդ կապերն ու փոխազդեցությունները: Հետազոտողների մեծ մասը հանգել է այն եզրակացության, որ դրոզական ցեղերի նախնիները ծագումով կապված են եղել սաքերի, ուսունների, դինլինների և հոնների ցեղային դաշինքների հետ⁶: Լեզվաբանական, պատմագրական և մարդաբանական հետազոտությունների արդյունքները և էթնոգրաֆիկ նյութերը թույլ են տալիս կատարելու որոշակի ենթադրություններ էթնիկ պրոցեսների բնույթի և ուղղվածության վերաբերյալ, որոնք ազդեցություն են ունեցել դրոզ ժողովրդի կազմավորման պրոցեսի վրա: Եվ քանի որ այս ժողովրդի կազմի մեջ այս կամ այն չափով ներգրավվել են ցեղեր, որոնք հին և միջին դարերում բնակվում էին Տյան-Շանի և

⁴ С.Е. Малов, *Памятники древнетюркской письменности*, М.-Л., изд. АН СССР, 1951, стр. 66, 448.

⁵ В.В. Бартольд, *изв. 12*, № 479-480:

⁶ Ст'ю А.Н. Бернштам, *Материалы и исследования по археологии СССР*, Москва, 1952, 346 стр.

Պամիրա-Ալայան լեռների շրջաններում, ապա կարելի է նաև խոսել հոգևոր և նյութական ժառանգականության մասին⁷:

Այսպիսով, դրոզների կենցաղավարման համակարգը հետոց ի վեր ձևավորված էքստենսիվ քոչվոր և կիսաքոչվոր տնտեսվարությունն է: Երկրի բնակլիմայական պայմանները թույլ էին տալիս կլոր տարին զբաղվել անասնապահությամբ: Լեռնային ռելիեֆը, ինչպես նաև տարաբնույթ բուսական ծածկույթով և կլիմայական պայմաններով ուղղահայաց աշխարհագրական գոտիները անասնապահների համար բարենպաստ պայմաններ էին ստեղծում կատարելու իրենց դարերով սահմանված տարեկան քոչի բոլորաշրջանը՝ նախիրներն անցկացնելով սեզոնային մի արտավայրից մյուսը: Անասնապահական տնտեսվարության ուղղվածությունը փոփոխվում էր ըստ պատմականորեն ձևավորված իրավիճակի: Երբ ֆեոդալական, միջցեղային պատերազմները կամ օտար զավթիչների հարձակումները ավելի հաճախակի էին դառնում, ձիաբուծությունը ստանում էր առավել կարևոր նշանակություն, իսկ ավելի քիչ շարժունակ համարվող ոչխարների, ուղտերի կարևորությունը նվազում էր: Հետզհետե անցնելով նստակեցության, երբ հողագործությունն էլ սկսում է դառնալ եիմնական զբաղմունքներից մեկը, աճում է խոշոր եղջերավոր անասունների, տնտեսական նշանակության ձիերի և որոշ չավտով էլ այծերի զլխաքանակը: Հետաքրքրական է, որ, ինչպես նշում է Մ.Մ. Աբրամզոնը, դրոզները Միջին Ասիայի թյուրքական ցեղերից միակն են, որ բուծում են տիբեթյան եզնուղտ, ինչը խոսում է տիբեթյան ցեղերի հետ դրոզների ունեցած սերտ առնչությունների մասին: Նրանց քոչի եղանակը նույնպես տարբերվում է տարածաշրջանի այլ թյուրքալեզու ժողովուրդներից: Ղյոզները տեղաշարժվում էին ուղղահայաց՝ լեռներն ի վեր, ինչը պայմանավորված էր ինչպես արդեն ասվել է, լեռնային ռելիեֆի և աշխարհագրական գոտիների առանձնահատկություններով, մասամբ էլ այդ ժողովրդի ռազմատենչությամբ: Յուրտերի ուղղահայաց դասավորվածությունը թույլ էր տալիս մի քանի ժամվա ընթացքում բանակը հասցնել ռազմական գործողություններին պատրաստ վիճակի⁸:

⁷ Մանրամասն տե՛ս В.Д. Кубарев, *Древнетюркские изваяния Алтая*, Новосибирск, 1984, 230 стр., Я.А. Шер, *Каменные изваяния Семиречья*, М.-Л., 1966, 139 стр.

⁸ В.В. Радлов, *Из Сибири*, Москва, 1989, стр. 348.

Ձմռան ընթացքում անասնապահները կանգ էին առնում քամուց պաշտպանված կիրճերում ե լեռնագոգերում:

Кыштоо – խոշոր եղջերավոր անասունների, ուղտերի և հեռավոր ուղևորությունների համար նախատեսված ձիերի արոտավայր: Өрүш – առվի մոտ գտնվող արոտավայր (սովորաբար լեռնային): Այս բառը հետագայում ստանում է նաև «ղաշտ» նշանակությունը և ժամանակակից դրոգերենում կիրառվում է տարբեր բնագավառներում՝ ամենալայն իմաստով⁹:

Камаа – ցանկապատված անասնանոց: Այս բառի իմաստը նույնպես ընդլայնվել է: Ժամանակակից դրոգերենում այն նշանակում է փակագիծ¹⁰:

Отоп – ոչխարների և ձիերի համար նախատեսված արոտավայր: Այս տիպի արոտավայրերը գտնվում էին հարավային լանջերի վրա, որտեղից քամին ջջում էր ձյունը: Ձյունառատ տարիներին առջնից արածեցնում էին ձիերին, որոնք սմբակներով փոքրում էին ձյունը, իսկ նրանց ետևից գալիս էին խոշոր եղջերավորները և ոչխարները:

Көктөө, бөксө – նախալեռներում գտնվող զարնանային արոտավայր: Այստեղ վաղ զարնանը տեղի էր ունենում կենդանիների ծինը: Ամառվա շոգը սկսելուն պես անասնապահները տեղափոխում էին իրենց անասուններին բարձրադիր լեռնային արտավայրեր – жайлоо: Այս բառը джайлоо տարբերակով որպես փոխառություն անցել է ռուսերենին¹¹:

Ձիու անվանումները. үйгүр – üğür հին թուրքական հուշարձաններում լայնորեն կիրառվող բառ է՝ նշանակում է «ձիու երամակ», ունի նաև «կորեկ» իմաստը¹²: Ըստ Մահմուդ Քաշգարիի օղուզների այս բառին ծանոթ չէին¹³: Դրոգերենում սրա իմաստն ավելի է ընդլայնվել և բացի «ձիու երամակ» նշանակելուց ունի

⁹ Б.О. Орузбаева, "О лексическом составе киргизского литературного языка", Тюркологические исследования, изд. "Илим", Фрунзе, 1970, стр. 182-207.

¹⁰ Б.О. Орузбаева, նույն աշխ., էջ 185:

¹¹ А. Супрун, "Некоторые киргизские элементы среднеазиатской лексики в русском языке", Тюркологические исследования, изд. "Илим", Фрунзе, 1970, стр. 37-47.

¹² Древнетюркский словарь, Ленинград, 1969, стр. 622.

¹³ Kâşgarlı Mahmut, *Dıvânü Lugâti't Türk*, İstanbul, 2005, s. 634.

ընդհանրապես «նախիր» իմաստը (կովի կամ մեկ ցլիկով հյուսիսային եզ եղջերաւի):

Сүрк - sūrig նախիր, երամակ: Այս բառը հանդիպում է ժամանակակից դրդերենի միայն հարավային խոսվածքներում¹⁴:

Таһ - նշանակում է մեկից մինչև երկու տարեկան ձի: Հին համայնությունը բառ է:

Акта - կրտած ձի: Այստեղից բարբառներում ախոռի իմաստով՝ актакан: Դրդերենի հարավային բարբառներում ունի կրտած ավանակի իմաստ: Այս անվանումը հանդիպում է նաև տուսգուսամաեջուրական լեզուներում և մոնղոլերենում агт, агт(ан): Տուսգուսամաեջուրական լեզուներում այն նշանակում է «կրտած եղջերու» актаки, акта, актапча: Իրանական վախառություն է:

Кулун - թյուրքական լեզուներում լայնորեն տարածված բառ է, այսպես նաև կոչվում նոր ծնված կամ կաթնակեր քուտակները, մինչև այդ նույն տարվա աշունը կամ մինչև առաջին մազաթափությունը: Իսկ դազախերենում և դրդերենում այս բառը տարիքային տարբերակման նշանակություն չունի: Ձիու քուտակի տարիքը նշելու համար օգտագործվում են այնպիսի նկարագրական կառույցներ ինչպիսիք են сүт эмп журген кулун, իսկ սեռային տարբերակման համար еркек кулун «արաւ քուտակ» իմաստով:

Бир/эки жашар ургаачы жылкы - մեկ-երկու տարեկան զամբիկ:

Жабагы - բարբառներում՝ жавагы վեց ամսեկանից մինչև մեկ տարեկան քուտակ: Գրավոր հուշարձաններում հանդիպում է жабагы տարբերակով:

Кунан - երեք տարեկան ձի: Օգտագործվում է նաև որոշ խոշոր եղջերավոր անասունների անվանումների հետ որպես քանակական որոշիչ. кунан бузая երկուսից-երեք տարեկան ցլիկ, հարավային բարբառներում՝ кунан нооназ:

Бышты - չորս տարին լրացած ձի (բարբառներում՝ бешти): Կարող է կիրառվել նաև ցանկացած ուրիշ կենդանու տարիքը որոշելու համար¹⁵: Միջինասիական տարածաշրջանի թյուրքական լեզուներում մինչև չորս տարեկան ձիերը, խոշոր եղջերավոր

¹⁴ Д.Х. Базарова, *Развитие лексики тюркских языков Средней Азии и Казахстана*, Ташкент, 1990, стр. 7.

¹⁵ Д.Х. Базарова, նույն աշխ., էջ 54:

անասունները և ուղտերն ունեն տարիքից կախված հատուկ տարբերակիչ անվանումներ: Չորս տարեկանից հետո տարիքը նշվում է տարբեր կերպ: Ղրղզերենի բարբառներում հինգ տարին լրացած ձիերին անվանում են *бешен ат*¹⁶:

Ղրղզերենում և ուզբեկերենի որոշ բարբառներում ձիու տարիքը չորս տարեկանից հետո հաշվվում է ըստ հիմնական ատամների թվի. *бир асығ* – հինգ տարեկան ձի, *эки асығ* – վեց տարեկան ձի, *уч асығ* – յոթ տարեկան ձի:

Շատ ծերացած և թուլացած ձիերի տարիքն արդեն չեն նշում. *дагир, мама, кунажин*¹⁷ – ծեր ձի:

Հին թյուրքական գրավոր հուշարձաններում «ծեր ձի» իմաստով օգտագործվում է *азіғ* բառը, որտեղ *а* արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է արմատային ատամները դուրս եկած ձի (*азіғ*¹⁸ – կենդանիների արմատային ատամը):

Жорға, арғымак – շորավարձ ձի: Ազնվացեղ արաբական ձիերը կոչվում են *арғымак*: Սակայն այնքան մեծ է եղել ձիու դերն ու նշանակությունը, որ որոշ թյուրքալեզու ժողովուրդների շրջանում այս բառի իմաստն ընդլայնվել է և բացի «ազնվացեղ ձի» իմաստից ստացել է նաև «հարգարժան, բարձր դիրք գրավող մարդ» իմաստը:

*Атаңда жок арғымак, / Анадан жок арғымак, / Саған не керек? / Шал корадаң карғымак*¹⁹.

Հոր կողմից չունեն լավ բարեկամ, / Մոր կողմից չունեն լավ բարեկամ, / Ինչ է մնում քեզ՝ նետվել փարախից:

Ոչխարների անվանումները. *қой* – ոչխարի ընդհանուր անվանումը, *Куван қой* – երեք տարեկան ոչխար, *дөнен қой* – չորս տարեկան ոչխար:

Короо – կավապատ կամ թվաւտներից պատրաստված փարախ, որտեղ ձմռանը պահում էին ոչխարներին, այստեղ էլ պահում էին ոչխարների չորացած թրիքը, որ կոչվում էր *көң*: Իսկ թրիքը դեռ չչորացած վիճակում կոչվում է *кык*: *Алачык* – այսպես

¹⁶ К. Мукамбаев, *Кыргыз тилинин диалектологиялык создугу*, Т. 1, Фрунзе, 1972, стр. 330.

¹⁷ К.К. Юдакин. *Киргизско-русский словарь*, Москва, 1965, 445 стр.

¹⁸ Käsghar Mahmut, *Divanü Lugâti't Türk*, İstanbul, 2005, 164s.

¹⁹ Н.С. Смирнова, *Казахские пословицы, записанные и опубликованные Мелиоранским П.М.*, Тюркологический сборник Москва, 1973, с. 233.

էր կոչվում այն քովիկը, որը պատրաստված էր փարախի կողքին՝ հովվի համար: Մինցցյանի դրոգներն այն կոչում էին *ак тѣрѣ: кене(кэпэ)* կամ *кедег* – խոտը պահելու համար կավե կամ քարե կալատեղ: Գարնանը սկսվում էր ոչխարաբուծության համար ամենապատասխանատու շրջանը: Մարտ և ապրիլ ամիսներին (եղնիկի կամ մարալի ամսին – *быту айында туулат*) գառների ծնվելու ժամանակաշրջանն էր: Այդ ընթացքում հովիվները ձգտում էին ոչխարներին արածեցնել ուղիղ և հարթ տարածությունների վրա: Մեկուց անմիջապես առաջ ոչխարներից սկսում էր արտագատվել դեղին խեժ. *ууз* – խեժ, դալ: Մնվելուց հետո հովիվները գառնուկի վրայից հեռացնում էին ընկերքը և տաք կտորով փաթաթած տանում էին փարախ. *тоя* – ընկերք: Մայր ոչխարը ամեն տեղ հետևում էր գառնուկին. *соолук* – ծննդկան ոչխար, *кунан кой*²⁰ – մայր ոչխար կամ չորս տարեկան ոչխար, *доноя кой* – հինգ տարեկան ոչխար, *жайдары кой* կամ *кисер кой* – դմակավոր ոչխար: Երբեմն հովիվները ծինի ժամանակ օգնում էին մայր ոչխարներին ուղղելով գառների դիրքը (*Огдойт*): *Kēṛēn*²¹ – ոչխարներին և գառներին ցցին կապելու պարան: Քսանից երեսուն օրեկան գառներին կրտում էին նրկսայր դանակով, որ կոչվում էր *наштѣр* (իրանական փոխառություն), բուն թյուրքական բառը՝ *биттечо* – կրտող, *быч* – կրտել: *irik* – կրտած ոչխար²², *кочкор* – արու ոչխար: Որպեսզի ժամանակից շուտ զուգավորում չլինի, արուներին հատուկ ամորձակալներ էին հագցնում, դրանք կոչվում էին *белддик*, իսկ հարավում՝ *кйлылк*: Նոյեմբերին, նրբ գալիս էր զուգավորման ժամանակը, արդ ամորձակալներն արձակվում էին: Այդ պահը ժողովրդական օրացույցում կոչվում է *бештин айында белдык алып*, ինչը թարգմանաբար նշանակում է «հինգերորդ ամսում ամորձակալ հանելը»: Զուգավորումն ավարտվում է դեկտեմբերի երկրորդ կեսին՝ *кыштын чилде*²³ (*чилде* – տարվա ամենացուրտ կամ ամենաշոգ քառասուն օրը, *кыштын чилде*²⁴ ամենացուրտ օրերը): Ոչխարներին խուզում էին հատուկ մկրատներով՝ *шуушаг*: Աշնանը խուզած բուրդը, որն ավելի արժեքավոր էր համարվում, կոչվում էր *кюзем*, իսկ գարնանային

²⁰ Д.Х. Базарова, *Июль шэһи*, էջ 115:

²¹ С.М. Абрамзон, *Июль шэһи*, էջ 71-77:

²² Э.В. Севортян, *Этимологический словарь тюркских языков*, Москва, 1974, 377 стр.

բուրդը՝ *даакы*²³: *qoi* բառի հին թյուրքական ծագման մասին վկայում են գրավոր հուշարձանները²⁴:

Շնտանի կենդանիների և որոշ չավով վայրի կենդանիների անվանումները, որպես բառապաշարի առանձին բաժին, ունեն իրենց առանձնահատկությունները: Թյուրքական լեզվաընտանիքում ընտանի կենդանիների անվանումները սերտորեն կապված են ժողովրդի վարած տնտեսության հետ և, հանդես գալով որպես եզրեր, դրանք գրեթե չեն ունեցել ներքին զարգացումներ, իսկ հնչյունաբանական փոփոխությունները շատ աննշան են: Այս կամ այն կենդանու ունեցած նշանակությունը դրդյունների վարած տնտեսության մեջ հանգեցրել է հարուստ եզրաբանության զարգացմանը, որն ընդգրկում է կենդանու սեռը, տարիքը, տեսակը, տնտեսության մեջ ունեցած դերը և այլն:

²³ С.М. Абрамзон, *Илий уэли*, էջ 78-79:

²⁴ St'u A. Von Gabain, *Eski Türkçenin Grameri*, çeviren Mehmet Akalin, Ankark, 1995, 282 s., С.Е. Малов, *Памятники древнетюркской письменности. Тексты и исследования*, Москва, 1951, 451 стр., Talât Tekin, *Orhon Yazitları*, Ankara, 2006, 200 s.